Հավելված 1

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԱՆՄՈՒԾ

2026թ.-ի հոկտեմբեր ամսվա ընթացքում ստացված տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրություն					
Գրավոր հարցումների ընդհանուր թիվը*					
	Ընդամենը**	**Բավարարված**	**Մերժված*****	**Մասնակի մերժված********	**Վերահասցեագրված**
ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ	**8**	**5**			**3**

Մերժման հիմքը	**Կիրառված հիմքի քանակը*********
պետական, ծառայողական գաղտնիք********	
բանկային գաղտնիք	
առևտրային գաղտնիք	
անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիք	
հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ	
հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքների պաշտպանություն	
բժշկական գաղտնիք *******	
նոտարական գաղտնիք	
փաստաբանական գաղտնիք	

* ***Գրավոր հարցումը*** *ներառում է թղթային, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ստացված հարցումները, այդ թվում՝ պաշտոնական էլեկտրոնային փոստով և էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով: Որպես գրավոր հարցում պետք է դիտարկվեն այն գրությունները, որոնցով դիմողը փնտրում կամ պահանջում է տեղեկություն տնօրինողից օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված կամ ձևավորված որևէ տվյալ: Այն, թե ինչպես է վերնագրված գրությունը (դիմում, հարցում) էական չէ, կարևոր է, որ գրությամբ տեղեկություն տնօրինողից ակնկալվի որևէ տեղեկության տրամադրում: Այլ պետական մարմիններից կամ տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված տեղեկություն տրամադրելու վերաբերյալ գրությունները ՏԱ մասին օրենքի իմաստով հարցումներ չեն:*

** *Այս սյունակում լրացվող թիվը պետք է համապատասխանի գրավոր հարցումների ընդհանուր թվին:*

*** ***Մերժում*** *են համարվում այն պատասխանները, որով տեղեկություն տնօրինողը օրինական հիմքով մերժում է տրամադրել տեղեկությունը:*

**** ***Մասնակի մերժման*** *դեպքում տեղեկություն տնօրինողը օրինական հիմքով մերժում է տրամադրել ոչ թե պահանջվող ողջ տեղեկությունը, այլ դրա միայն մի մասը:*

***** *Մերժման յուրաքանչյուր հիմքին համապատասխանող սյունակում նշվում է, թե քանի անգամ է կիրառվել տվյալ մերժման հիմքը. հաշվի առնելով, որ տեսականորեն մի հարցմամբ կարող է պահանջվել տարբեր հիքմերով մերժման ենթակա մի քանի տեղեկություն՝ այս թիվը կարող է հավասար կամ ավելին լինել, քան մերժումների (ներառյալ՝ մասնակի մերժումների) թիվն է, սակայն չի կարող մերժումների (ներառյալ՝ մասնակի մերժումների) թվից պակաս լինել:*

****** *Այս հիմքը ներառում է նաև տեղեկություն տնօրինողի գործունեությունը կարգավորող օրենքով գաղտնիք համարվող տեղեկության մերժումները (երբ տեղեկություն տնօրինողի համար օրենքով սահմանված է աշխատանքային կամ ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում ստացած կամ ձևավորած տվյալները գաղտնի պահելու պարտականություն):*

******* ***Օրենքներով կարող են սահմանված լինել*** *բժշկական, նոտարական կամ փաստաբանական գաղտնիքներից բացի* ***մասնագիտական գործունեությամբ*** *պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալների այլ դեպքեր: Օրենքներով նման այլ գաղտնիքի հիմքով տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում վիճակագրության վարման այս ձևանմուշում տեղեկություն տնօրինողը պետք է համապատասխան տող ավելացնի:*